Արսեն Լ.Պետրոսյան
տնտ. գիտ. թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԻՄՆԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ*

Որքան բարդ է հայրենիքից հեռանալու որոշում կայացնելը, նույնքան էլ բարդ է դրա պատճառները վերլուծելու խնդիրը: Ավելին՝ նման պրոբլեմն անհնար է բացահայտել՝ անտեսելով արտագաղթի դիմողին առաջնորդող սուբյեկտիվ հանգամանքները: Ուրեմն՝ առանց բոլոր գործոնների մանրակրկիտ քննության՝ հնարավոր չէ գնահատական տալ արտագաղթի ցավալի երևույթին:

Եթե անգամ վերջին քսան տարիների ընթացքում Հայաստանից շարունակվող արտագաղթը փորձենք բաժանել փոքր հատվածների՝ պարզելու համար, թե դրանցից յուրաքանչյուրում կրթական, արժեքային, գաղափարական ի՞նչ հատկանիշներով օժտված մարդիկ ենք արտերկիր ճանապարհել, դարձյալ բավականին դժվար կլինի իրականացնել դասակարգման ու խմբավորման առաջադրանքը:

Սակայն ահագնացող արտագաղթի ծավալներն այնպիսին են, որ արդեն այսօր կարող ենք փաստել հետևյալը. ոչ միայն պակասել է Հայաստանի բնակչությունը՝ բացարձակ թվաքանակով, այլև արդեն երեք-չորս տարի է՝ չենք ապահովում անգամ նրա պարզ վերարտադրությունը: Հետևաբար՝ հաշվի առնելով «ցախավելի» մասին իմաստուն առածը, պիտի ընդունենք, որ ժողովրդագրական առումով թուլացել ու թուլանում ենք և դա ապացուցելու համար անգամ գիտական հաշվարկների կարքի չկա:

Սեփական հանգամանքների քննությունը՝ վերջին տարվա ընթացքում դառնությամբ արտերկիր ճանապարհած հարազատներիս օրինակները, վկայում են, որ ներկա փուլում արդեն բնավ նյութական բնույթի պատճառները չեն առաջնայինը՝ երկիրը լքելու որոշում կայացնելիս: Հայաստանից հեռացողների շարքերում քիչ չեն անգամ բարձր ինտելեկտուալներն ու հաջողակները, որոնց «համբերության բաժակի» վերջին կաթիլը ոչ թե նյութական-սոցիալականն է, որը սկզբում է՝ «բաժակի տակ», այլ երկրի ապագայի նկատմամբ հավատի կորուստն ու անառողջ բարոյահոգեբանական մթնոլորտը[1]:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20. 06. 2010:

1 Առիթից օգտվելով, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Միացյալ ազգերի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակին վերջերս լույս ընծայած 2009-ի Մարդկային զարգացման ազգային զեկույցի համար, որի թեման «Միգրացիան և մարդկային զարգացում»-ն էր: Նշված զեկույցը իր կարգավիճակով ու եզակիությամբ Հայաստանի Հանրապետության Ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության հետ մեկտեղ, թերևս, հանդիսանում են թեմային վերաբերող ամենահիրատապ ու համապարփակ ուսումնասիրությունները:

1. Արտագաղթի հակասական վիճակագրությունը

Ժողովրդագրական ու միգրացիոն գործընթացների վրա ազդող գործոնների շարքում հիմնական դերակատարում ունեն ընտանիքի կայուն եկամուտը և դրա հետ կապված՝ կենսապայմանները, վերարտադրողական վարքը, ավանդույթային նորմերը, բնակարանային պայմանները, երեխայի ապագայի նկատմամբ ընտանիքի պատասխանատվության աստիճանը, անձի, մասնավորապես՝ երեխայի զարգացման պայմանների առկայությունը, սոցիալական պաշտպանվածության աստիճանը, մայրության և երեխայի իրավունքների պաշտպանվածությունը, բնակչության առողջության, մասնավորապես՝ վերարտադրողական առողջության մակարդակը, սեռատարիքային համամասնությունների պահպանումը, միգրացիայի և էմիգրացիայի հարաբերակցությունը, չկառավարվող ներքին միգրացիան, ուրբանիզացիայի մակարդակը, կրթական ծառայությունների մատչելիությունը, անվտանգությունը, պետության նկատմամբ վստահությունը:

Հայաստանի Հանրապետությունից տեղի ունեցող արտագաղթի վրա սրանցից յուրաքանչյուրն, անշուշտ, ունի ազդեցության իր բաժինը, սակայն հաշվի առնելով այն փաստը, որ անկախության ողջ ժամանակահատվածում Հայաստանից արտագաղթած բնակչության թիվը փաստորեն՝ համարժեք է Մեծ եղեռնի ժամանակաշրջանում կոտորված հայերի թվին՝ 1.500.000, չենք կարող նրա պատճառների հանդեպ որդեգրել պարզունակ ու մեխանիկական մոտեցումներ: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում երկրի բնակչության բնական հավելաճը կազմելով շուրջ 450.000, ամենևին էլ չի փոխհատուցել այս ահռելի կորուստները:

Հայաստանի ազգաբնակչության բնական աճի վրա բացասական ազդեցություն են գործել նաև հետևյալ կարևոր հանգամանքները. 1990 թվականի 23,6-ի փոխարեն ամուսնության միջին տարիքը ներկայումս 26,4 է, իսկ պտղաբերության գործակիցը (մեկ կնոջ երեխաների միջին թիվը) 2,6-ից նվազել է 1,4-ի: Ընդ որում՝ հայկական գյուղում, որը միշտ աչքի է ընկել բնական աճի բարձր տեմպերով[2], պտղաբերության գործակիցը հավասարվել է քաղաքի ցուցանիշին՝ սկսած 2007 թվականից (1,4)[3]: Սակայն արձանագրվող ժողովրդագրական ցուցանիշներից առավել մտահոգող է ազգաբնակչության սոցիալ-հոգեբանական իրավիճակը և մշտապես առկա արտագաղթը:

Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ Հայաստանում բարձրանում է առաջին անգամ ամուսնացող տղամարդկանց և կանանց միջին տարիքը, ընդ որում՝ ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական վայրերում: Որպես այս երևույթի տրամաբանական շարունակություն առկա է երեխայի ծննդյան պահին մոր միջին տարիքի աճի միտումը: Իսկ ծնելիության տարիքային գործակիցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին նվազում է առավել երիտասարդ տարիքի կանանց ծնելիությունը, փոխարենը՝ աճում է 30-39 տարիքային խմբի ծնելիության գործակիցը: 2004-2009 ժամանակաշրջանում ունենք ինչպես ամուսնությունների, այնպես էլ ամուսնալուծությունների աճ, սակայն, ցավոք, ամուսնալուծությունների ոչ հարաժեք 40% աճը՝ ամուսնությունների 10% -ի դիմաց:

---

2 Տե՛ս Լ. Մ. Դավթյան, Սովետական Հայաստանի բնակչության վերարտադրությունը, Եր., 1965:
3 Տե՛ս Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2009, ՀՀ ԱՎԾ, էջ 19:

Աղյուսակ 1. Հայաստանի հիմնական ժողովրդագրական ցուցանիշները 1990, 2004-2009[4]

հազար մարդ

Ց ՈՒ Ց Ա Ն Ի Շ	1990	1996	2004	2005	2007	2008	2009
ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ,	**3574,5**	**3780,7**	**3215,8**	**3219,2**	**3230,1**	**3238,0**	**3250,8**
որից							
աշխատունակ տարիքից ցածր	1152,0	1107,9	758,2	731,2	673,4	653,9	---
աշխատունակ տարիքի	1974,3	2122,0	2036,9	2079,9	2169,9	2198,6	---
ԾՆՎԱԾՆԵՐ	**79,8**	**48,1**	**37,5**	**37,5**	**40,1**	**41,2**	**44,4**
ՄԱՀԱՑԱԾՆԵՐ	21,9	24,9	25,7	26,4	26,8	27,4	27,5
ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**28,2**	**14,2**	**17,0**	**16,6**	**18,1**	**18,5**	**18,7**
ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4,3	2,6	2,0	2,5	2,9	3,0	2,8
ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄՆԱՑՈՐԴ	**- - -**	**-6,2**	**-7,7**	**-7,8**	**-6,4**	**-5,4**	**-4,4**

Աղյուսակ 1-ում բերված միգրացիայի մնացորդը՝ ըստ Ազգային վիճակագրական ծառայության, ամենևին էլ ամբողջական չէ: Քանզի հիմնված լինելով ոստիկանության բաժիններում հաշվառվող և հաշվառումից դուրս եկող անձանց տվյալների վրա, այն չի արտացոլում Հայաստանի միգրացիոն տեղաշարժերի իրական պատկերը: Որպես ապացույց՝ ներկայացնում ենք արտաքին ուղևորաշրջանառության համախառն ծավալները՝ ըստ Հայաստանի Հանրապետության սահմանային անցման կետերում իրականացվող՝ ուղևորների հաշվառման տվյալների:

Աղյուսակ 2. Ուղևորաշրջանառության համախառն ծավալը[5]

հազար մարդ

Տարեթիվը	Ժամանել են	Մեկնել են	Հաշվեկշիռ
2000	399,7	457,2	-57,5
2001	508,2	568,6	-60,4
2002	590,7	593,4	-2,7
2003	618,3	628,5	-10,2
2004	739,9	737,8	2,1
2005	845,8	833,3	12,5
2006	983,7	962,0	21,8
2007	1293,6	1296,8	-3,2
2008	1397,2	1420,2	-23,1
2009	1431,9	1456,9	-25,0
Նախորդ 10 տարին	**8809,0**	**8954,7**	**-145,7**

Ստացվում է, որ վերջին տասը տարիներին, այսինքն՝ անկախացումից հետո տնտեսական առումով լավագույն ժամանակաշրջանում, յուրաքանչյուր տարում **միջինը 15 հազար** մարդ է հեռացել երկրից: Նշված ժամանակահատվածում թե՛ արտագաղթողների և թե՛ ներգաղթողների ընդհանուր թվաքանակի ավելի քան

4 Տե՛ս www.armstat.am, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակումներ:

5 Տե՛ս ՀՀ ՏԿՆ Միգրացիոն պետական ծառայություն, http://backtoarmenia.am

կեսը բաժին է ընկնում 20-49 տարիքային խմբի բնակչությանը: Հայաստանից մեկնողների տարիքային երկրորդ մեծ խումբը **մինչև 14 տարեկաններն** են: Այն որ արտագաղթողների մեծ մասը երիտասարդությունն է, վկայում են նաև սոցիոլոգիական հետազոտություններ: Հարցման ենթարկված ընտանիքների **42,5 տոկոսի երեխաները** գտնվում են հայրենիքի սահմաններից դուրս: Ընտանիքների 5,7 տոկոսին բաժին է ընկնում երկու երեխա, 13,1 տոկոսին՝ աղջիկներ, 18,8 տոկոսին՝ թոռներ, 11,3 տոկոսին՝ երկու թոռներ: Մինչդեռ, ինչպես հայտնի է, երիտասարդությունը ոչ միայն բնակչության, այլև հասարակության ներքին արդյունքի հիմնական վերարտադրող է, ազգային եկամուտ արարողը[6]:

Մեզանում արտերկիր մեկնողների թվաքանակի, մեկնման նպատակի, ժամկետների, մեկնողների կարգավիճակի, ինչպես նաև վերադարձողների հստակ հրապարակային հաշվառում չի վարվում: Ուղևորահոսքերի հաշվեկշիռները, Ազգային վիճակագրական ծառայության ընտրանքային հետազոտությունների տվյալները և ոստիկանության տարածքային անձնագրային բաժինների հաշվառման տվյալները վկայում են որ Հայաստան ժամանում են առավելապես Ռուսաստանից, Վրաստանից և Ուկրաինայից, իսկ մեկնում են հիմնականում՝ Ռուսաստան, Եվրոպա և ամերիկյան մայրցամաք: Ներգաղթողների մեջ կան ինչպես ժամանակավոր արտագաղթածներ, այնպես էլ արտասահմանում ծնված հայրենակիցներ:

Առանձնապես արագորեն են դատարկվում Հայաստանի սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային գոտիներում տեղակայված գյուղական բնակավայրերը, որոնցում տարեցտարի արձանագրվում է բնակչության թվաքանակի նվազում, որը հիմնականում տեղի է ունենում ի հաշիվ տնտեսապես ակտիվ բնակչության[7]:

Պատկերն ամբողջացնելու, ինչպես նաև այսօր մեր հասարակության ներսում առկա միտումները ներկայացնելու համար մեջբերենք վերջին ամիսների դիտարկումների կոնկրետ օրինակները:

Առաջին, Գյումրու երիտասարդների շրջանում կատարված հարցման մասնակիցների 79%-ը դրական է պատասխանել հնարավորություն ունենալու դեպքում արտասահման մեկնելու կողմնորոշմանը[8]:

Երկրորդ, օտար լեզուների ուսուցման կենտրոնի տվյալներով՝ ներկայումս 20 անգլերեն սովորողներից՝ 12-ը և 20 ֆրանսերեն սովորողներից՝ 15-ը պատրաստվում են փորձել մեկնելու արտասահման[9]:

Երրորդ, մեզանում արձանագրվում է նաև այն փաստը, որ երիտասարդների նկատմամբ պետական հոգածություն չի նկատվում: Փոխարենը արտասահմանը հրապուրիչ ծրագրեր է առաջարկում երիտասարդ գիտնականներին[10]:

Չորրորդ, Տրանսֆերտների (դրամական փոխադրումների) աճին ուղիղ համեմատական կերպով Հայաստանում աճում են թմրամոլությունը, սեռական հիվանդությունները, հարբեցողությունն ու անբարոյականությունը: Սոցիալական

---

6 Տե՛ս Վ. Ե. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի նախաշեմին, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Եր. 2002, էջ 309:

7 Տե՛ս Հայաստանի հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարություն, կետ 89, ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի թիվ 27 արձանագրային որոշման հավելված 1:

8 Տե՛ս 20.02.10, 16:15 «Ռադիո Երևան», FM 102:

9 Տե՛ս Սեփական հարցում:

10 Տե՛ս Գիտության պետական կոմիտեի նախագահ, «ԱՐ» ՀԸ, «Ազդարար» 14.02.10:

ծանր իրավիճակը ծնում է անզորություն, անհանդուրժողականություն, չարություն իշխանության, նաև` սեփական ընտանիքի անդամի, կնոջ նկատմամբ[11]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանից արտագաղթողների մեջ բարձր է 1 տարուց ավելի բացակայողների տեսակարար կշիռը: Եթե այս ցուցանիշին ավելացնենք նաև 1-3 տարի բացակայողներին, հանրագումարը կգերազանցի 50%–ը: Սա նշանակում է, որ վերարտադրողական տարիքում գտնվողների մի կարևոր մասը արդեն համալրել է կամ մոտ ապագայում կհամալրի անվերադարձ միգրանտների շարքերը: Անբարենպաստ միտումներ են նկատվում նաև աշխատունակ տարիքի բնակչության ժողովրդագրական վերարտադրության ցուցանիշի դինամիկայում, որը բնութագրվում է 15-19 տարեկան և 60-64 տարեկան բնակչության հարաբերակցությունով: Կանխատեսումները վկայում են, որ 2011 թվականից սկսած չի ապահովվի անգամ աշխատունակ բնակչության պարզ վերարտադրությունը և այս իրավիճակն իր ազդեցությունը կունենա երկրի տնտեսական զարգացման վրա[12]:

Այսպիսով՝ Աղյուսակ 1-ում բերված միգրացիայի մնացորդի և Աղյուսակ 2-ում ներկայացված ուղևորաշրջանառության համախառն ծավալի անգամ թռուցիկ համեմատությունը ցույց է տալիս, որ Հայաստանից արտագաղթողների թիվը պաշտոնականից շատ ավելի մեծ է: Երիտասարդները ոչ միայն արտագաղթողների մեծ մասն են, այլև Հայաստանում մնացած երիտասարդության շրջանում ևս առկա է պոտենցիալ արտագաղթողների մի ահռելի բանակ և այս իրավիճակի ինքնակարգավորման հնարավորությունները մեղմ ասած՝ իրատեսական չեն:

2. Արտագաղթի տնտեսական և սոցիալական պատճառները

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանից հեռանալու անմիջական պատճառների շարքում առաջինը շարունակում է մնալ տեղում աշխատանքի բացակայությունը: Միաժամանակ, եթե մինչև 1999-ը բնակչության արտագաղթի էր մղում հիմնականում աշխատատեղերի բացակայությունը, ինչպես նաև նյութականի բարելավման ձգտումը, ապա 1999-ից սկսած՝ դրան հավասարազոր գործոնի աստիճանի է բարձրացել երկրում գոյատևման համար անհրաժեշտ միջոցներ վաստակելու անհնարինությունը[13]:

Աղյուսակ 3. Աղքատությունը և բարեկեցությունը բնութագրող ցուցանիշներ

ՑՈՒՑԱՆԻՇ	1990	1996	2004	2005	2006	2007	2008	2009
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ մակարդակը, %	. . .	9,3	34,6	29,8	26,5	25,0	23,5	. . .
1 ՇՆՉԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ, դրամ/ամիս, որից ՏՐԱՆՍՖԵՐՏՆԵՐ, %	. . .	9592 16,5%	14 450 12,6%	17 766 9,7%	18 446 9,2%	22 287 10,6%	26 866 10,0%	. . .
1 ՇՆՉԻՆ բաժին ընկնող ՀՆԱ, ԱՄՆ դոլար	2589*	754	1113	1523	1982	2853	3685	2686

11 Տե՛ս Ազգագրագետ, «Շողակաթ» ՀԸ, 14.01.10:

12 Տե՛ս Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարություն, կետ 84, ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի թիվ 27 արձանագրային որոշման հավելված 1:

13 Տե՛ս նույն, տեղում, կետ 45, 62-65:

* Այդ տարվա ցուցանիշն արտահայտված է ԽՍՀՄ ռուբլով:

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ, %	. . .	9,3	9,6	8,2	7,5	7,0	6,3	. . .
ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ, մլն ԱՄՆ դոլար, FOB	-643,4	-565,5	-450	-582	-899	-1593	-2644	-2070
1 ՇՆՉԻՆ բաժին ընկնող ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔ, ԱՄՆ դոլար	. . .	. . .	368	341	374	448	487	913
ՍՂԱՇ, % (ժամանակաշրջանի վերջը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)	. . .	2,0	2,0	-0,2	5,2	6,6	5,2	6,5
ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ/ ԳՐՔԵՐ- մլն	1441/ 21	1248/ 20	1058/ 19,4	1051/ 19,3	1045/ 19,2	1038/ 19,2	1034/ 19,2	. . .
ԹԱՏՐՈՆՆԵՐ/ ՀԱՇԱԽՈՒՄ- հազ.	19/1450	20/690	24/340	25/400	26/380	26/410	26/410	. . .
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ	1192	1037	653	645	645	637	628	. . .
ԳՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4125	2945	2791	2463	3090	2712	3216	3961

Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության կողմից 2007-ին իրականացված 7872 տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության ժամանակ, Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանությամբ տնտեսապես ակտիվ բնակչության 30,7%-ը եղել է գործազուրկ:

Ի դեպ, աղքատության ավանդական ըմբռնմանը, որը հիմնվում էր եկամուտների չափերի վրա, Համաշխարհային բանկի 1992 թ. ուսումնասիրությունների արդյունքում ավելացվեցին նաև այնպիսի բարիքների ձեռքբերման ցուցանիշներ, ինչպիսիք են առողջությունը, կրթությունը և սնունդը: 2000-ին աղքատության նկարագրությանն ավելացան նաև խոցելիությունը կամ՝ սոցիալական տարատեսակ ռիսկերից անպաշտպան լինելը, ձայնազրկությունը, անզորությունն ու իշխանությունից զրկված լինելը: Սոցիոլոգիական ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս նաև, որ զբաղվածությունն ու նյութական կարգավիճակը, կարիերայի առաջընթացը, երիտասարդների համար այն կարևոր գործոններն են, որոնցից կախված է ցանկալի թվով երեխաներ ունենալու կամ չունենալու նրանց որոշումը:

Համաշխարհային բանկի փորձագետ Քեյթ Գրիֆֆինի կարծիքով, շուկայական տնտեսությանն անցնելու գործընթացի հենց սկզբից Հայաստանում կտրուկ աճեց եկամուտների անհավասարությունը: Այն ավելացրեց աղքատության տեսակարար կշիռը՝ բնակչության ընդհանուր թվակազմում: Բնակչության եկամտային անհավասարության աստիճանն արատացոլող Ջինի գործակիցը 1989 թ. 0,258-ից 1990-ական թթ. երկրորդ կեսին Հայաստանում հասավ 0,59-0,60-ի, որի հետևանքով, մեր երկիրը դասվեց եկամտային անհավասարության գծով աշխարհի ամենաանհավասարաչափ պետությունների դասին: Ավելին, այս երևույթը շարունակվեց նաև 2000-ականներին[14]:

Արտագաղթ ծնող սոցիալ-տնտեսական գործոնների թվում կարևոր է նաև գործարար միջավայրի վիճակը: Ամփոփ ներկայացնելու համար ներկա իրավի-

14 Տե՛ս Միգրացիա և մարդկային զարգացում, Մարդկային զարգացման ազգային զեկույց-2009, Հայաստան, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, էջ 55-56, 72:

ճակը՝ դիմենք Հայաստանի ազգային մրցունակության 2009 թվականի զեկույցին. Հայաստանի հիմնական մրցակցային առավելություններն են պետական պարտքի փոքր չափը, աշխատանքի շուկայի կարգավորումը, ինչպես նաև գյուղատնտեսական քաղաքականությունը, հանցագործությունների և ահաբեկչության հարուցած նվազ ծախսերը: Թերությունների ցուցակը կրկին գլխավորում են շուկայում գերիշխող խմբերի առկայությունը և մրցակցության անկատար մակարդակը, որը հակամենաշնորհային անարդյունավետ քաղաքականության հետևանք է: Նախորդ տարվա համեմատ ամենաէական թերությունների շարքին են դասվում մաքսային ընթացակարգերի բեռը, տեխնոլոգիաների պետական գնումների քաղաքականությունը, բիզնես կրթության որակը, տնտեսության դեպի սպառում միտված կողմնորոշումը և այն[15]:

Տնտեսական բարեփոխումները չեն կարող առաջ ընթանալ և մասնավոր ներդրողները, ներառյալ՝ օտարերկրյա ձեռներեցները, իրենց լիովին բարեհարմար չեն զգա Հայաստանում գործ հիմնելու և վարելու համար, առանց պատշաճ գործող դատաիրավական համակարգի, որը պետք է պաշտպանի մասնավոր սեփականությունը, տնտեսական իրավունքները և հիմնի երաշխավորված գործարար միջավայր:

Ոչ պակաս նշանակություն ունի առողջապահության և կրթության վիճակը: Հայաստանում առողջապահական ոլորտում ծառայությունների առկա մակարդակը, ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների, ընդհանուր առմամբ բավարար է բնակչության առողջական վիճակի պարզ վերարտադրությունն իրականացնելու տեսանկյունից: Սակայն չենք կարող ասել, որ մարդկային կապիտալի դինամիկ վերարտադրության ու մարդկային զարգացման խնդիրների լուծման տեսանկյունից ներկա առողջապահական համակարգը լիովին բավարար է, քանի որ դրա գործունեությունը չի հանգեցրել հիվանդությունների աճի նվազմանն ու կյանքի տևողության սպասվող աճին: Հակառակը՝ 2003-2007 թթ. նկատելի է հիվանդությունների աճի ընդգծված միտում: Հատկապես բարձր են այնպիսի հիվանդությունների աճի տեմպերը, որոնք բացասաբար կարող են ազդել մարդու հնարավորությունների պահպանման և ընդլայնման վրա: Իսկ եթե ասվածին հավելենք նաև այն, որ բնակչության մեջ այդպիսի հիվանդությունների տարիքը երիտասարդացել է, ապա կարելի է ասել, որ այն բացասաբար կարող է ազդել մարդկային կապիտալի վերարտադրության վրա[16]:

Համաձայն վերջին տարիների ուսումնասիրությունների, անպտղության գործակիցը ՀՀ-ում բավականին բարձր է՝ մոտ 32 %, որը մի քանի անգամ գերազանցում է ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Արևմտյան Եվրոպայի և տարածաշրջանի մյուս երկրների նույնանուն ցուցանիշին, երկու անգամ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից 1993-ին սահմանված ճգնաժամային մակարդակին (15%), որի դեպքում անպտղությունը դիտվում է որպես ժողովրդագրության վրա ազդող հիմնական գործոն և սոցիալ-բժշկական հիմնախնդրից վեր է ածվում համազգային, համապետական հիմնախնդրի: Բացի այդ, նման պրոբլեմներ ունեցող զույգերի 1/3–ը ամուսնալուծվում է կամ ունենում է հոգեբանական խնդիրներ: Անպտղության բուժման օժանդակ տեխնոլոգիաները

15 Տե՛ս Յայաստանի ազգային մրցունակության զեկույց-2009, «Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն», 2009, էջ 6:

16 Տե՛ս Միգրացիա և մարդկային զարգացում, Մարդկային զարգացման ազգային զեկույց-2009, Յայաստան, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, էջ 152:

թանկարժեք բժշկական ծառայություններ են և հասանելի չեն բնակչության ճնշող մեծամասնությանը[17]:

Կրթությունը մի քանի առումներով է հանդիսանում ժողովրդագրական և միգրացիոն իրավիճակի վրա ազդող գործոն: Նախ, հայ իրականության մեջ կրթություն ստանալը և երեխաների համար կրթության հնարավորություններ ստեղծելը շատ դեպքերում սկզբունքային է, և հետազոտությունները ցույց են տալիս, որ արտագնա աշխատանքի մեկնելու ծանրակշիռ պատճառներից մեկն էլ սա է: Երկրորդ, կրթությունը հնարավորություններ է բացում արտերկրի գործատուների մոտ առավել մրցունակ կերպով ներկայանալու և վերջապես, երրորդ՝ կրթությունը, առողջապահության ու սոցիալական միջավայրի հետ մեկտեղ կանխորոշում է մարդու որակյալ վերարտադրությունը, տնտեսական առաջընթացը, պետության դիրքերը[18]:

Այսպիսով, տնտեսական իրավիճակը, առողջապահության և կրթության համակարգերը կանխորոշում են մարդկային ռեսուրսների որակյալ վերարտադրությունը, ուստի պետական ծրագրերն ու երկարաժամկետ քաղաքականությունները հենց այս համատեքստում պետք է մոտենան երկրի զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին:

3. Արտագաղթին նպաստող բարոյահոգեբանական գործոններ

Մակրոտնտեսական կարգավորման փորձը զարգացած երկրներում ցույց է տալիս, որ «կանոններով խաղը» անվիճելի առավելություն ունի կամայական քաղաքականության նկատմամբ: Դրա արդյունքում՝ առաջին, նվազում է ոչ իրավասու որոշումների ընդունման ռիսկը, երկրորդ, նվազում է քաղաքական բիզնես-ցիկլի ազդեցությունը՝ զբաղվածության մակարդակի ցիկլիկ տատանումների, արտադրության և ինֆլյացիայի վրա, երրորդ, ձևավորվում են պայմաններ կառավարության և կենտրոնական բանկի քաղաքականության նկատմամբ վստահության աճի համար:

Անհետևողականությունը և դրական միտումների, նաև՝ սպասումների բացակայությունն այսօր առկա են մեր պետական-հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, ինչը սպառնալիքի տակ է դնում երկրի ազգային անվտանգությունը[19]:

Ազգային վիճակագրական ծառայության կատարած հետազոտության համաձայն՝ 2004 և 2008 թվականներին ջրամատակարարման, ջրահեռացման, աղբահանության, հեռախոսի, էլեկտրաէներգիայի, փոստի, բանկի, ոռոգման, առողջապահության, կրթության, հասարակական տրանսպորտի ծառայությունների վատացման դեպքերում ծառայություն ստացողները չեն դիմել համա-

17 Տե՛ս Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարություն, կետ 165, ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի թիվ 27 արձանագրային որոշման հավելված 1:

18 Տե՛ս Գ. Ի. Վարդանյան Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ, Եր., 2008:

19 Անցանկալի երևույթների առկայությունը Հայոց բանակում փաստ է և որպես դրա արդյունք ունենք խաղաղ պայմաններում մահացությունների և դասալիքների զգալի թիվ: Մեր բանակի բարոյահոգեբանականը պետք բարելավվի հիմնավորապես, այլապես այն շարունակելու է անցանկալի հետևանքներ ունենալ ոչ միայն զինվորական, այսինքն՝ անվտանգության ոլորտում, այլև խրախուսելու է կործանարար չափերի հասնող արտագաղթը: Չէ՞ որ բանակը և հասարակությունը խորապես փոխազդում են միմյանց վրա, հետևաբար՝ շատ կարևոր է այստեղ արդարության, հավասարության և օրենքի կիրարկման ապահովումը: Ավելի մանրամասն տե՛ս Արմեն Այվազյան, Հիմնատարրեր Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, Երևան, 2004, Հայաստանի պաշտպանական հայեցակարգը: Տե՛ս նաև՝ COMMISSION OF THE EUROPEAN COMMUNITIES, Implementation of the European Neighborhood Policy in 2008, Progress Report Armenia.

պատասխան կազմակերպության ղեկավարությանը: Ընդ որում, այս «իներտության» ցուցանիշը բարելավման միտում չի ունեցել: Այդ ընթացքում` 2004-ին, ծառայության որակի վատացման դեպքում համապատասխան կազմակերպության ղեկավարությանը չեն դիմել ծառայություն ստացողների 98,4%-ը, 2008-ին` 99,2%-ը: Նմանատիպ միտում է առկա նաև ոչ մեծ չափի հանցագործությունների (կողոպուտ, գողություն) դեպքերում, երբ ոչ միշտ է տուժած կողմը դիմում իրավապահին:

Որպես այս ամենի լրացուցիչ ապացույց` քննենք Աղյուսակ 4-ում ներկայացված` Հայաստանից մեկնելու հիմնական դրդապատճառները 1991-ից 1998 և 2001 թվականներին: Ի թիվս այլ պատճառների, որպես առանձին խմբեր առանձնացվում են սոցիալական, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտն ու Հայաստանում զարգացման հեռանկարի նկատմամբ հավատի բացակայությունը:

Համաձայն աղյուսակի, տարբեր տարիներին այս ցուցանիշները եղել են 1-20%-ի սահմաններում, սակայն կարծում ենք, որ հենց սրանք են, որ անկախ այլ դրդապատճառներից, վերջին երկու տասնամյակում գրեթե միշտ ուղեկցել են Հայաստանից հեռացողին (օրինակ` 1990-ականներից սկսած աշխատանքի և գործազրկության խնդիրները, ինչպես նաև ձեռներեցությամբ զբաղվելու դժվարությունները մշտապես հրատապ են եղել Հայաստանում, միևնույն ժամանակ քիչ չեն եղել աշխատանք չունեցող, բայց երկրում մնացած ընտանիքները):

Աղյուսակ 4. Հայաստանից մեկնելու հիմնական դրդապատճառները[20]

տոկոս

Դրդապատճառները		Ընդամենը		0-19		20-49		50 +	
		Կին	**Տղամ**	**Կ**	**Կ**	**Կ**	**Տ**	**Կ**	**Կ**
Աշխատատեղերի բացակայությունը	1991-1998-ին	**24**	**46**	4	3	31	50	17	45
	2001-ին	**34**	**58**						
Մասնագիտական աշխատանքի բացակայությունը	1991-1998-ին	**3**	**5**	1	1	4	5	2	5
	2001-ին	**3**	**5**						
Բավարար կենսամակարդակի համար վաստակելու անհնարինությունը	1991-1998-ին	**12**	**18**	3	-	15	20	13	21
	2001-ին	**29**	**30**						
Սոցիալական-բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը	1991-1998-ին	**6**	**5**	5	3	8	5	3	7
	2001-ին	**3**	**1**						
Աշխարհաքաղաքական անկայուն իրավիճակը	1991-1998-ին	**1**	**2**	-	-	1	2	-	1
	2001-ին	**3**	**-**						
Հայաստանում զարգացման հեռանկարի նկատմամբ հավատի բացակայությունը	1991-1998-ին	**3**	**5**	-	-	4	5	3	2
	2001-ին	**20**	**4**						
Ձեռներեցությամբ զբաղվելու դժվարությունները	1991-1998-ին	**1**	**4**	-	-	1	4	-	4
	2001-ին	**-**	**1**						
Ընտանիքի վերամիավորումը	2001-ին	**40**	**8**	76	81	29	2	39	8
Այլ	1991-1998-ին	**10**	**7**	11	12	7	7	23	7
	2001-ին	**8**	**1**						

20 Տե՛ս http://www.armstat.am/file/article/gender_99_arm_4.pdf /Source – 2001 migration Survey performed by NSS of the Republic of Armenia/, HOW TO REVERSE EMIGRATION? 2003, p. 8, A. Yegiazaryan, V. Avanesian, N. Shahnazaryan, jointly with “Ameria” CJSC.

Ավելին, ինչպես արդեն նշեցինք, հասարակության որոշ շերտերի կողմից (ինտելեկտուալ, ընդգծված ազգային դիմագծով, պահպանողական անհատներ) հեռանալու որոշում կայացնելու «համբերության վերջին կաթիլ» են դառնում հենց սոցիալական, բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտն ու զարգացման հեռանկարի նկատմամբ հավատի բացակայությունը:

Անտարբերությունը, սեփական շահերին հետամուտ չլինելը, արդարության հաղթանակի նկատմամբ հույսի անկումը, օրենքի անտեսումը, բարոյականության անկումն ու վերջապես՝ անմիաբանությունը դարձել են հայաստանյան կյանքի ուղեկիցները[21]: Ցավոք, դժգոհությունն ու բողոքը մեզանում հիմնականում անտարբերությամբ և արտագաղթով է արտահայտվում:

Հակված ենք անգամ մտածելու, որ ներկա փուլում Հայաստանից հայի ուժեղ արտահայտված տեսակն է գնում: Հայաստանում ուժեղ հայը անգործության է մատնված: Նրա ամենօրյա կյանքի կռիվը ոչ մի կապ չունի հայ հասարակության, Հայոց պետականության հետ: Գիտակցելով ու ամենևին էլ անտարբեր չլինելով, նա չի կարողանում ազդել իր հաջորդ սերնդի վաղվա օրվա վրա: Հետևաբար՝ չի ուզում հանդուրժել իր սեփական երկրում օտարված լինելը, ու գնում է դրսում «երջանկանալու»:

Արտագաղթին նպաստող հաջորդ գործոնը պայմանականորեն կարող ենք անվանել քաղաքակրթական և արժեքային ճևախեղումներ: Դրանց շարքում է պետության դերի թուլացման հանգամանքը, որն ակնհայտ տեսանելի է ինչպես մակրոտնտեսական ու սոցիալական ցուցանիշներում, այնպես էլ հասարակական կյանքի ամենօրյա դրսևորումներում, ազգային-հայրենասիրական գործոնի թուլացումը, որն իր տեղը զիջել է նյութապաշտության բացարձակացմանն ու բարեկեցության պաշտամունքին[22]: Խոսքը վերաբերում է նրան, որ արբենալով լիբերալացման բացասական դրսևորումներով (որոնց հաղթահարման հիմնական պատասխանատուն որպես կանոն պետությունն է), Հայաստանի բժիշկը, մանկավարժը, սնունդ արտադրողը, հուղարկավորության ծառայություն մատուցողը և այդ բոլորը գովազդողն ու եթեր հեռարձակողները ինչ-որ միֆերի ազդեցության տակ[23] հայտնվել են փողն աստվածացնողների դերում: Նյութականի ամենօրյա վազքարշավի տենդի տակ կարծես ժամանակ անգամ չկա յուրաքանչյուրիս մի պահ կանգ առնելու ու խորհելու՝ ու՞ր ենք վազում, ինչի՞ հետևից և ու՞ր կհասնի այսպես մեզնից հետո եկող սերունդը...:

Հետանցումային շրջանի Հայաստանի հասարակության արժեքային կողմնորոշումների ու ապրելակերպի փոփոխությունները հանգեցրել են ամուսնությունների թվի և ծնելիության կրճատմանը, ամուսնական տարիքի և ամուսնալուծությունների աճին: Այսօր հանրապետությունում գերակշռում են 1 կամ 2 երեխա ունեցող ընտանիքները: Այս պատկերը և՛ քաղաքային, և՛ գյուղական բնակավայրերում կարճ ժամանակում տեղի ունեցած ժողովրդագրական վարքի

---

21 Այդ ինչպե՞ս է հնարավոր, որ սոցիալական կամ սոցիալական ուղղվածություն ունեցող պետության մեջ, ազգային որոշակի ծրագրեր ու բյուջեներ որդեգրած երկրում, աղքատությունը կազմի 29,8%, այսինքն՝ բնակչության 1/3-ը, և որ աղքատ լինելու սանդղակը պաշտոնապես համարվի 20.289 դրամը: Ավելի մանրամասն տե՛ս «Տեսակետ ՄԻԺԻ», N 24, դեկտեմբեր 2007, էջ 10-11:

22 Ավելի մանրամասն տե՛ս Արձանագրությունները բացահայտեցին մեր հին հիվանդությունները, Խմբագրական, «Վէմ» համահայկական հանդես, թիվ 3 (28), 2009:

23 Տե՛ս Ա. Նռանյան, Տնտեսական միֆեր և իրական տնտեսություն, «Դրօշակ», N 6 (1591), նոյեմբեր, 2007:

էական փոփոխությունների ապացույցն է[24]: Գուցե այս ամենի մեջ կա օբյեկտիվի որոշակի մասնիկ՝ 3 և ավելի երեխա ինչ-որ կերպ մեծացնելուն գերադասում ենք «որակով» 1-2-ը: Բայց եթե նույնիսկ դա այդպես է, ապա միայն՝ անհատի մակարդակում, իսկ որպես ազգ ու հասարակություն մենք տանուլ ենք տալիս ժողովրդագրական «պայքյուններ» արձանագրող մեր հարևաններին:

Արտագաղթի լուրջ պատճառ է նաև Հայաստանում հայ մարդու բնատուր ունակությունները իրացնելու հնարավորությունների սահմանափակությունը: Մարդկային զարգացման գլխավոր նպատակը համարվում է մարդու ունակությունների շարունակական բացահայտման, զարգացման ու ստեղծագործորեն իրացվելու միջավայրի ձևավորումը, ինչը պետք է դառնա նաև կառավարությունների գործունեության գլխավոր խնդիրը: Եթե տնտեսական զարգացման հայեցակարգի համաձայն՝ ազգային հարստության տակ հասկացվում են առկա նյութական ու արտադրական ռեսուրսները և տեխնոլոգիաները, ապա մարդկային զարգացման տեսության համաձայն՝ թիվ 1 ազգային հարստությունը համարվում է մարդը և նրա ազատությունների բարձր աստիճանը, որին պետք է ծառայի ամեն ինչ՝ տնտեսությունը, պետությունը և մշակույթը: Հայաստանում պետական քաղաքականության մակարդակում այս գործոնը դեռևս բավարար չափով չի կարևորվում, ինչը հաճախ դառնում է մարդկային զարգացման նպաստավոր միջավայրի պահանջմունք ունեցողների հոռետեսության և էմիգրացիոն շարժերի պատճառը[25]:

Այս առումով առանցքային կարևորություն ունի մարդկային զարգացման որակական բնութագիրը ներկայացնելը, քանի որ դա է ընկած աշխարհի առաջատար ազգերի և պետությունների զարգացման ընթացքն ու հաջողությունները գնահատելու հիմքում: Այդ երկրների աշխատաշուկաները բաց են աշխարհի առավել որակավորված ու մարդակենտրոն աշխարհայացք ունեցող անհատների համար: Եվ շատ դեպքերում բարձր որակավորում ունեցող անհատների միգրացիան ոչ միայն պայմանավորված է աշխատանքի բարձր վարձատրության բաղադրիչով, այլև միջավայրի աշխարհայացքային հարմարավետությամբ, ինչը ստեղծագործական անհատների համար ինքնաիրացման մեծ և անընդհատ նորացող հնարավորություններ ու լիցքեր է տալիս[26]: Ուրեմն՝ մարդկային զարգացման ասպեկտում խնդիրներ տեսնողների՝ երկրից հեռանալը իր մեջ պարունակում է զարգացման, որակյալ վերարտադրության պոտենցիալի նվազման սպառնալիք:

Տաղանդի զարգացման և անհատական որակների իրացման հնարավորությունները սուղ են մեր երկրում և պետք է փաստենք, որ հաճախ դրանք նաև արհեստականորեն են վիժեցվում[27], քանի որ չկա համապատասխան կենսունակ

---

24 Հետխորհրդային ժամանակաշրջանում հանրապետությունում թուլացել է ամուսնության և մայրության խրախուսմանն ուղղված համակարգը, մասնավորապես հարկային համակարգից հանվել է «անզավակության հարկը», որը պետության քաղաքականության մաս էր կազմում: Հիմնականում փլուզվել է նաև նախադպրոցական տարիքի երեխաների խնամքի և դաստիարակության՝ մսուր-մանկապարտեզների համակարգը /տե՛ս Աղյուսակ 3/, որը նախկինում գործում էր անգամ հեռավոր գյուղերում:

25 Տե՛ս Միգրացիա և մարդկային զարգացում, Մարդկային զարգացման ազգային զեկույց-2009, Հայաստան, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, էջ 145:

26 Տե՛ս նույն տեղում, էջ 147:

27 Բազմիցս առիթ ենք ունեցել տեղեկանալու, որ Հայաստանի ուսումնական հաստատություններում սովորողներից ամենատաղանդավորները հնարավորություն չեն ստանում առավել մասշտաբային և հեղինակավոր հարթակներում ինքնարտայատվելու, հանդես գալու, քանի որ վերջիններիս ծնողները

քաղաքականություն և ձևավորված մթնոլորտ: Նշված երևույթի ու արտագաղթի կապն այսօր ուղղակի է: Արդյունքում մեր երաժիշտները սկսում են ապրել և ստեղծագործել եվրոպական երկրներում, մարզիկները՝ հանդես գալ այլ երկրների դրոշի ներքո: Եվ վերջապես, Հայաստանի համար լուրջ մարտահրավեր է «ուղեղների արտահոսքը»: Մեծաթիվ բարձրորակ մասնագետներ, տաղանդավոր գիտնականներ ու նաև՝ խոստումնալից երիտասարդներ, տարբեր շարժառիթներով մեկնում են այլ երկրներ՝ նպաստելով նրանց մտավոր կապիտալի մեծացմանը: Ներկա աշխարհակարգում անհնար է արհեստական եղանակով կասեցնել մի բան, որը նաև գլոբալացման մարտահրավերներից է: Ուղեղը «գնում» է այնտեղ, որտեղ բարձր է գնահատվում[28]: Ուրեմն՝ հարկավոր է գնահատել (օգտագործել, զարգացնել) ունեցածը և ո՛չ թե նպաստել նրա կորստին:

4. Արտաքին աշխարհի «ձգողականությունը»

Հայաստանի ժողովրդագրական և միգրացիոն իրավիճակի վրա ազդող հիմնական արտաքին գործոնը արտերկրի այսպես ասած՝ «հասցեական քաղաքականությունն» է: Դրա տակ նկատի ունենք հիմնականում Արևմտյան Եվրոպայի ու Հյուսիսային Ամերիկայի երկրներում, իսկ վերջերս նաև Ռուսաստանում նկատվող «ուղեղների ներհոսք» կազմակերպելու միտումները: Համապատասխան քաղաքականություն վարող պետությունները, որպես կանոն, մեծ գումարներ չծախսելով ներգաղթողների կրթության վրա, դեպի իրենց երկիր են ուղղորդում մտավոր և կրթական մեծ ներուժ ունեցող անհատներին ու նրանց ընտանիքի անդամներին: Առաջիկա տասնամյակների համար իրենց երկրների գիտատեխնիկական ու արդյունաբերական վերելքն ապահովելուց զատ, լեգալացնելով այդ համեմատաբար էժան աշխատուժը, այս պետությունները որպես կանոն լուծում են նաև իրենց ժողովրդագրական խնդիրները՝ բնակչության ծերացում (Արևմտյան Եվրոպա), բնակչության թվաքանակի ու բնական աճի մեծացման խնդիր (Կանադա) և այլն: «Ուղեղների ներհոսքի» միջոցով այնպիսի երկրներ, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Իսրայելը, Կանադան, արդեն տասնամյակներ է, ինչ միլիարդավոր դոլարների եկամուտներ են ստանում[29]:

Կրթական, գիտական, մշակութային ներուժի չկարգավորված արտահոսքը նվազեցրել է հայաստանյան հասարակության մտավոր ներուժը, պակասեցրել սոցիալ-տնտեսական, գիտատեխնիկական ու մշակութային զարգացման հնարավորությունները: Բարձրագույն կրթություն ստացած անձանց էմիգրացիոն գործակիցը (էմիգրացվածների տեսակարար կշիռը՝ բոլոր բարձրագույն կրթություն ստացածների թվում) Հայաստանի համար 2000թ. կազմում էր 11,2 %, որը

ի վիճակի չեն լինում բավարարելու տնօրինության կողմից պահանջվող ոչ ֆորմալ վճարները: Համաձայնենք, որ նմանատիպ երևույթները մեզանում ոչ թե լռության պետք է արժանանան, այլ համապատասխան հասարակական կարծիքի և ազգային առաջընթացին անհրաժեշտ մթնոլորտի պայմաններում պետք է խարազանվեն որպես հայրենիքի դավաճանության դեպքեր:

28 Տե՛ս Գ. Ի. Վարդանյան, Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ, Եր., 2008, էջ 211, 246-249, տե՛ս նաև՝ Հայաստանի LS-Պիրկալ. փլուզումից վերելք, Հայաստանի ազգային մրցունակության զեկույց-2009, «Տնտեսություն և արժեքներ հետազոտական կենտրոն», 2009, էջ 109:

29 Տե՛ս Վ. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության արտագաղթը և միտումները մոտ ապագայում, «21-ՐԴ ԴԱՐ» N 3, 2006:

մոտ 4,5 անգամ գերազանցում էր հարևան Վրաստանի ու Ադրբեջանի համապատասխան ցուցանիշները: Հայաստանի գիտական շրջանակները վաղուց է արդեն, որ ուշադրություն են հրավիրում այս խնդրի համապատասխան ասպեկտների վրա[30]:

Վերջին տարիներին արտասահմանյան երկրների սոցիալ-քաղաքական իրավիճակից կախված՝ նկատվում են նաև դեպի Հայաստան որոշակի ներգաղթի միտումներ (Իրաքից, Իրանից՝ հիմնականում քաղաքական իրավիճակի հետ կապված, Ռուսաստանի Դաշնությունից, ԱՄՆ-ից, հիմնականում՝ տնտեսական նկատառումներից ելնելով և այլն), որոնց կայունությունը, առավել ևս երկարաժամկետ ազդեցությունը երկրի ժողովրդագրական իրավիճակի վրա, ներկա փուլում դժվար է գնահատել:

Մոտ ապագայում Հայաստանի ժողովրդագրական և միգրացիոն իրավիճակի, ինչպես նաև տնտեսական ու քաղաքական անվտանգության վրա ազդեցություն կարող են ունենալ տարածաշրջանի դեմոգրաֆիկ միտումները, որոնց ամփոփ պատկերը ներկայացվում է ստորև:

Աղյուսակ 5. Տարածաշրջանի դեմոգրաֆիկ միտումները[31]

Ցուցանիշ	ժամանակաշրջան	ՀԱՅԱՍՏԱՆ	ԱԴՐԲԵՋԱՆ	ՎՐԱՍՏԱՆ	ԹՈՒՐՔԻԱ	ԻՐԱՆ
ԱՐՏԱԳԱՂԹԻ գործակից, %[1]	2000-2002	20,3	14,3	18,3	4,2	1,3
ԲՆԱԿԱՆ ԱՃԻ տարեկան գործակից, %[2]	1990-1995	1,1	1,8	0,6	1,8	2,2
	2005-2010	0,7	1,2	0,1	1,2	1,3
ՊՏՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ ընդհանուր գործակից (1 կնոջ հաշվով ծնունդները)	1990-1995	2,4	2,9	2,1	2,9	4,0
	2005-2010	1,7	2,2	1,6	2,1	1,8
ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ, մլն մարդ	2007	3,1	8,6	4,4	73,0	72,4
	2020	3,2	9,8	4,0	83,9	83,7
Կախվածության գործակից, ԾԵՐԵՐ[3]	1990	8,8	6,9	14,1	6,8	6,2
	2010	16,1	9,5	20,7	8,8	6,8
Կախվածության գործակից, ԵՐԵԽԱՆԵՐ[4]	1990	47,4	55,7	37,2	60,5	86,7
	2010	29,4	34,4	24,2	39,0	33,4

Ծանոթություն

1. արտագաղթողների քանակն արտահայտված %-ով՝ մայր երկրի բնակչության և արտագաղթածների թվաքանակի նկատմամբ,
2. բնակչության աճի չափը՝ որոշվող միայն ծնունդով և մահով,
3. 65 տարեկան և բարձր բնակչությունը՝ աշխատունակ տարիքի բնակչության (15-64) նկատմամբ, %-ով,

30 Տե՛ս Ա. Մարգարյան, Ազգային նորամուծային համակարգը զարգացման մարտահրավերների համատեքստում, «Վէմ», 2009, N 2 (27), տե՛ս նաև՝ Գ. Ի. Վարդանյան, Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ, Եր., 2008, տե՛ս նաև՝Միգրացիա և մարդկային զարգացում, Մարդկային զարգացման ազգային զեկույց-2009, Հայաստան, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, էջ 69-70:
31 Human Development Report 2009, UNDP.

4. մինչև 15 տարեկան բնակչությունը՝ աշխատունակ տարիքի բնակչության (15-64) նկատմամբ, %-ով:

Եզրակացություններ և առաջարկներ

Ամփոփելով Հայաստանի ներկա ժողովրդագրական և միգրացիոն իրավիճակը պայմանավորող գործոնների ներկայացումը, կարող ենք ասել, որ մեր հասարակությունն ու քաղաքական իշխանությունն ունեն.

Առաջին, առկա վտանգի իրական ընկալման անհրաժեշտություն, քանի որ միգրացիոն գործընթացների զարգացման միտումները՝ էմիգրացիայից հստակ արտահայտված անցումն անվերադարձ արտագաղթին, կիսված ընտանիքների՝ հիմնականում Հայաստանից դուրս վերամիավորվելու գործելակերպը, ծնելիության ու բնական աճի՝ պարզ վերարտադրություն չապահովող աստիճանը, տարածաշրջանի ժողովրդագրական միտումները, բավարար հիմքեր չեն տալիս լավատեսորեն գնահատելու մեր երկրի մոտակա հեռանկարները: Հրամայական անհրաժեշտություն է, որպեսզի մեզանից յուրաքանչյուրը առարկայորեն պատկերացնի, որ պետության և յուրաքանչյուրի բարգավաճումն ու տնտեսական անվտանգությունը Հայաստանի մշտական բնակչության թվաքանակի աճով է պայմանավորված.

Երկրորդ, զգացվում է ազգային-պետական միավորի առանցքային գաղափարի և դրա կարևորության ընկալման անհրաժեշտություն. անթույլատրելի է, որ ներգաղթողները, այդ թվում՝ ավանդական Սփյուռքից ժամանողները, հիասթափվեն ու մտածեն կրկին արտերկիր վերադառնալու մասին, հակառակ դեպքում մենք ընդմիշտ կկորցնենք մեր հայրենակիցների սերունդը: Հայաստան վերադառնալիս նախապես կայացված կշռադատված որոշումները պարունակել են ինչպես տնտեսական, այնպես էլ ազգային-հայրենասիրական շարժառիթներ, ուստի ուժերի լարումով նման քայլի դիմած անհատների ու ընտանիքների՝ հայրենիքում «կոտրվելը» պետք է ընկալվի որպես համազգային ողբերգություն: Դա պետք է կանխել ազգային պետության գաղափարը երկրի ու հասարակության ամենօրյա կյանքում անընդհատ գեներացնող մթնոլորտի ձևավորմամբ: Պետությունը Հայաստանում կտրված է հասարակությունից, հասարակությունն էլ՝ անհատից: Նշվածը թեպետ ոչ լուրջ ֆինանսական ներդրումներ, սակայն բավականին դժվար աշխատանք պահանջող խնդիր է, որը կապահովի ամենակարևորը՝ ազգային պետության ու տնտեսության ստեղծագործ վերելքը:

Երրորդ, նպատակների և կառավարման որակի վերահմաստավորման անհրաժեշտություն. Հայաստանի վաղվա օրվա համար պատասխանատու ոլորտների, առաջին հերթին՝ կրթական համակարգի վիճակը, աղքատությունը, հասարակության բևեռացումը, գիտական և մշակութային ներուժի անկառավարելի ու ինտենսիվ արտագաղթը հարկ է ճանաչել որպես ազգային անվտանգության ներքին սպառնալիքներ և վերջիններիս հաղթահարումը դիտարկել որպես ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոն.

Չորրորդ, համապատասխան քաղաքականությունների առաջքաշման և իրացման հրատապ անհրաժեշտություն. ժողովրդագրական և միգրացիոն բնագավառում ևս հրատապ անհրաժեշտություն է հասարակական լայն քննարկման ներկայացված պատասխանատու քաղաքականությունների առաջադրումն ու

իրագործման մեկնարկը[32]: Սակայն, ի տարբերություն այլ բնագավառների, այստեղ խնդրո առարկաները միաժամանակ մյուս բոլոր քաղաքականությունների թե՛ միջոցն են և թե՛ առարկան: Արդեն միջնաժամկետ հեռանկարում ամեն ինչ անիմաստ կդառնա, եթե մենք չկարողանանք բեկում մտցնել ժողովրդագրական միտումներում:

Աշխատանքի գաղափարը և «աշխատասիրություն» հասկացությունը մոռացվում է մեզ մոտ: Կարծես չենք էլ իմացել, որ հարստության իրական աղբյուրը մարդն է ու աշխատանքը: Ունենք ինչպես նյութականի ճնշող գերակայություն հոգևորի նկատմամբ, այնպես էլ ձևի՝ բովանդակության նկատմամբ: Անհրաժեշտ է դրական սպասումների ու բարձր ակնկալիքների ձևավորում հասարակության մոտ՝ քաղաքական ուժերի նկատմամբ, իշխանության մոտ՝ մտավոր-ինտելեկտուալ որակներ ունեցողների նկատմամբ, քանի որ եղած քաղաքականություններն ու հայեցակարգերը, ցավոք, հիմնականում հռչակագրային բնույթ են կրում, իսկ հայաստանյան միջավայրը գնալով առավել անբարենպաստ է դառնում ստեղծագործելու և արարելու համար:

Կարող ուժերը իրենց ստեղծագործ ունակություններով ցանկանում են լծվել առաջընթաց ապահովող ընդհանուր աշխատանքին: Մեծ գործի մասնիկը լինելու՝ հենց այս արարիչ բերկրանքն է, որ նյութականից առաջ պակասում է հայ մարդուն:

Summary

THE MAIN REASONS OF EMIGRATION AND PERCEPTION OF THREAT

Arsen L. Petrosyan

Emigration is the most essential challenge for Armenia now. Due to emigration and the existing reasons of emigration, Armenia registers a fall of demographic data and there are no optimistic tendencies.

The reasons generating emigration are grouped into socio-economic, moral psychological, and foreign factors. It is noted that the morally and psychologically healthless surroundings and the absence of faith for developing perspective are the main factors nowadays.

Summing up the article, the author concludes, that Armenia's and everyone's economic security and prosperity are connected with the number of the permanent population of the country. A significant precondition to reach this target is to establish fairly and creative social surroundings in the country.

32 Հայաստանի ժողովրդագրական և միգրացիոն խնդիրների լուծման կոնկրետ առաջարկներն ու ուղղությունները առավել հանգամանորեն շարադրել ենք 2010 թ. մարտի 25-26-ին Երևանում կայացած «Սոցիալիստական մոտեցումներ Հայաստանի մարտահրավերներին. գլոբալ հեռանկարներ, տեղական իրողություններ» համաժողովում ներկայացված «Ժողովրդագրական և միգրացիոն հիմնախնդիրները Հայաստանում» մանրամասն զեկույցում, որը հրապարակվելու է համաժողովի նյութերի ժողովածուի մեջ: